

5469

5470

5471

5472

1904

9(47.925)

S-16

№ 10

„ԱՅԻ“-ի ԳՐԱԴՐԱՆՆ

№ 10

92

թի 755

Հ. ՊԱՆԻՉԵԱՆ



ԵՔԱ-ՑԱՀԻ ԱՐԱՆՏԻՒՐԱՆ



Աւոճ. Հայոց. Թեմ. սպառան

1921



ԷԲՍ-ՇԱՀԻ ԱՐԱՆՏԻՒՐԱՆ*)

(Տասնամետի առքիւ)

I

Ներկայ լուլիս ամսի 4-ին ըրա-
նում է տասնամետին այն օրւանից,
եթիւ իր երկրից արտաքսւած շահը՝

*) Մի քանի տարի սրանից առաջ, 1917 թւին, ես հրատարակեցի «Յեղա-
փոխական շարժումները Պարսկաստա-
նում» գրքովը, որ տալիս էր անցքերը, սկսեալ սահմանադրական ակտիւ շարժ-
ման սկզբնաւորութիւնից, 1906 թւից
(սրովին սահմանադրական պասսիւ շարժումն այս երկրում շատ ճին պատ-
մութիւն ունի) մինչև բռնակալի՝ Մահ-
մեդ Ալի շահի գահընկեցութիւնն ու երկ-
րի սահմաներից արտաքսումը 1909 թ.
յուլիս 3-ին Ներկայ մոնոգրաֆիան, որ
սեղմ գձերով ներկայացնում է էքս շահի
աւանտիւրան, պատկանում է այդ շարժ-
ման երկրորդ փուլին, երբ, վերապարթ-
նող Պարսկաստանը ներւած էր խա-
ղաղ, սահղծագործ աշխատանքիւ

Հ. Պ.



37299-67 զ-

Տօջու - Ա. Ի.

Մուհամէդ Ալին Օդեսայում և
արտասահմանում մի քանի տար-
ւայ հանգստից լեռոց ուղեց փորձ
փորձել և այն վերջին փորձն, իր
կորցրած գահը վերստանալու հա-
մար:

Այս տասը տարւայ ընթացքում
Պարսկաստանի գլխով շատ բաներ
անցան ու դարձան, այսպէս ասած,
շատ ջրեր հոսեցին և այժմ էլ,
ինչպէս տառը տարի սրանից առաջ,
նրա քաղաքական վիճակը, նրա
միջազգային դրութիւնը համարեա
միենունն է, ինչ որ առաջ էր, այս
դարաւոր իրանում կարծէք ամեն
ինչ դատապարտւած է արձանաց-
ման, նա ուղում է կարծէք առաջ
շարժւել, բայց և միշտ միենոյն
տեղումն է կանգնած:

Պարսկական լեզափոխութեան
առաջին լաղթանակը 1909 թ.
յուլիսին և պարսկական աբսոլիւ-
տիզմի ջախջախումն ի դէմս Մու-
համէդ Ալու անկման, առաջին

հալեացքին առաջադիմութեան նոր
ուղի էր բաց անում կարծէք, նոր
Հեռանկարներ՝ դեմոկրատացած
Պարսկաստանի համար, Երկրորդ
Մէջլիսը, Պարսկաստանի պարլա-
մենտն ամբողջ երկու տարի էր
կանոնաւորապէս գործում էր, ճիշտ
է, արևելեան դանդաղկառութեամբ,
«եավաշ-եավաշ», բայց և Պարս-
կաստանն օրէց օր նորանում էր,
վերանորոգման ուղին էր բանելւ
Մէջլիսը մի շաբք կարեոր օրինա-
գծեր արդէն անց էր կացրել՝ զին-
ւորական, ֆինանսական, կրթական
և այլն*). պակասը լրացնում էին
հէնց նոյն Մէջլիսի կողմից հրա-
ւիրւած օտար ինստրուկտորները,
որոնք աշխատում էին զանազան
մինիստրութիւնների մէջ և հիմ-
նական բեֆորմացիայի ենթարկում

*) Բերարը տալիս է Ռ. Մէջլիսի
լուծած խնդիրների ցանկը. V. Berard,
«Révolution de la Perse», Paris
1910, p. 355.

նրանց գործունէութիւնը։ Աչքի
ընկնաղ դեր էր կատարում, մանա-
ւանդ, պարսկական ֆինանսները
կարգաւորող գանձապետ Մորգան
Շուստերը, Ամերիկայից հրաւիր-
ւած, որ 1911 թւի սկզբներին
գործի անցաւ և չանցած հազիւ
վեց ամիս, այնպէս կարգաւորեց
Պարսկաստանի ֆինանսները, որ
նրան ամենափալլուն վիճակի հաս-
ցրեց։ Այն կարծիքն էր տիրում,
որ չանցած մի քանի ատրի և
Պարսկաստանը ոչ միայն բալրու-
վին կազատ էր իր պարտատէրերի,
առանձնապէս Ռուսաստանի ճի-
րաններից, այլև իր ուրոյն, ան-
կախ տնտեսութիւնը կունենար, որ
անշուշտ, իւրաքանչիւր պետու-
թեան նաև քաղաքականապէս ան-
կախ, ինքնուրոյն գոյութեան ա-
մենապէտան պայմանն է։

Սակայն Պարսկաստանի տնտե-
սական և քաղաքական անկախու-
թիւնն, անշուշտ, չէր կարող հա-

ճելի լինել ժամանակի հօգանաւո-
րող երկու կապիտալիստ պետու-
թիւնների՝ Ռուսաստանի և Անգլ-
իալի համար, որոնք, ինչպէս յայտ-
նի է, 1907 թւի համաձայնու-
թեամբ Պարսկաստանն ազդեցու-
թեան զօնների էին բաժանել և
իւրաքանչիւրն իր ազդեցութեան
շրջանում անինալորէն ծծում,
հարստահարում էլ այս հարուստ,
բայց թշուառ երկիրը։

Պարսկաստանի անկախ գարգա-
ցումին հաշտ տչքով նայել չէր
կարող մանաւանդ հիւսիսալին հա-
րեանի՝ ցարական Ռուսաստանը,
որին տոքիծի բաժինն էր ընկել
հիւսիսում՝ Ատրպատական, Գիլան,
Մազանդարան, Խորասան, նաև
կենտրոնական պարսկաստանն երկ-
րի մալրաքաղաքով, մինչև Իոպա-
հանը։ Սակայն բացարձակ և վրան-
բաց ձեռք գէմ գնալ Պարսկաստա-
նի սեփական ալս քալերին, Ռու-
սաստանը չէր կարող, Պարսկաս-

տանի «անկախութիւնն և անձեռնամիսելիութիւնը պահպանելու» այն սկզբունքների պատճառով, որ հավանաւոր երկու պետութիւնները, թէկուզ ձեւականօրէն, գըել էին իրենց համաձայնութեան հիմքում՝ 1907 թւին. Բայց կալին դրա համար ուրիշ միջոցներ, անուզզակի ճանապարհներ. կար մի պատրաստի դիմակ, որի յետեւում ուղւական գէմքը կարող էր արտաքին աշխարհի համար աննկատելի իր գիւային և գաւագրական ծամածառութիւններն անել. ‘Իտ’ էքս Շահն էր, Մուհամէդ Ալին, որ իր զահակալութեան քառամեայ ընթացքում ուստիան չահերին հլուօրէն ընդուածք էր զնացել, որին ի վարձատրութիւն, նա առաջնական հիւրասիրութիւն էր գտել նրա գեղեցիկ նաւահանգստներից մէկում և որ նոյն՝ 1911 թւականի ամբան, իր գեղուկ, բայց լոգուած և տարագիր մարմինը կազ-

գուղում էր Մարիենբադի ջերմուկներում՝ Վիեննային մօտիկ.

II

Ալսպէս ուրեմն, թէ արտաքին և թէ մանաւանդ ներքին հանգամանքները, որի մասին շուտով կը տեսնենք, էքս շահի ձեռնարկելիք արկածախնդրութեան համար խոստանում էին լուջողութեան բոլոր հաւանականութիւնները. և նա, լոլոերով լի, լունիս ամսի վերջերին թաղնելով Մարիենբադը, ուսունական տաճկական անցագույն անցնում է Մուսաստանի վրայով, Կառափից ծավի տփին՝ Պետրովսկ նաւահանգստում նատում է սեփականատէր Կուլիանի «Քըիստավիոր Կոլումբ» նուն և լույիսի 4-ին դուրս է գալիս ոլորտկան, ափը՝ Գիւմիշիշէֆէկում, Աստրաբադի շրջա-

նում, թուրքմենների մօտ, ուր վազուց նրա գործակալները նրա համար հօղ էին պատրաստել:

Պարսկական կառավարութիւնը, որ, ինչպէս երեսում, է իր արտասահմանեան ներկայացուցիչների միջացով իրազեկ էր եղել Մահմեդ Ալու ձեռնարկին, գեռ գրանից առաջ կրուկ միջացներ է ձեռք առնում գրա առաջն առնելու Յուլիս 2 ին Թիֆլիսի պարսկական հիւպատոսն, ազգարարում է Կախանովսկուն՝ Մահմեդ Ալու ազենտների մասին, որոնք Բագրւ էին հասել, որին, ի պատոսիան, զերծինս շտապում է հաւաստիացնել, որ թէ Թիֆլիսի ժանդարմատկան վարչութիւնն ու գաղտնի սատիկանութիւնն և թէ Բագրւ պահպանական բաժանմունքն ալդպիսի անձնաւորութիւնների մասին տեղեկութիւններ չունին: Բայց հետաքրքրականն ալն է, որ երբ Ասմեն բանից անտեղեակ» ուսու կառավա-

րութեան արտաքին գործոց մինուշտութեան գործավար՝ Ներատովվը հեռագրական հրահանգ է ուղարկում և այն՝ լուլիս 6-ին, Վենեալի իր գեսպան Գիրսին, նախազգուշացնելու Մահմեդ Ալուն իր ձեռնարկների համար, վերջինս լայտնում է իր մինիստրին, որ էքսշահն ալլես Մարիենբրդում չէ:

Պարսկական կառավարութիւնն այնուհետեւ շարունակում է ուժեղացնել երկրի պաշտպանութեան գործը՝ դիպլամատիկական քաղլերի և երկրի ներքին ամրացման միջացով: Յուլիս 11-ին, նա ուզում է հսկանաւոր երկու պետութիւնների Թէհրանի գեսպաններին նոյնանման նոտա, որով դատապարտում է առանձնապես ուսու կառավարութեան բոնած կասկածելի դիրքը, լիշեցնում 1909 թ. էքսշահի գահընկեցութեան առթիւ պետութիւնների հետ կազմած արձանագրութեան §. §. 10 և 11-ը, որոնք

վերաբերում են նրանց լանձնաւութիւններին՝ շահի կենսաթոշակի, նրա հեռացման և հովտնաւորութեան մասին և, ներկալ գեղքերի ընթացքում լինելիք բոլոր վնասների պատասխանատւութիւնը թողնում է լիշեալ պետութիւնների վրայ:

Սյու խնդիրների վերաբերմամբ, ինչպէս երևում է տեղի ունեցող հեռազրտկան բակակցութիւններից, կատարւած երկու պետութիւնների՝ Անդլիալի և Ռուսաստանի միջև, Հրաատրակւած ռուսական «Նարնջագոլն գրքում»,* երեան են գալիս երկու տարբեր տեսակէտներ:

Պետերբուրգի անգլիական գեոպան՝ Բիւկենենը Մահմեդ Ալու յաջողութիւնը համարելով անգլիական շահերին հակառակ, իր կառավարութեան կողմից առաջարկում է Ներտասավին, կանգնել

*.) «Сб. дипл. дош», Вып. VII. С. Петерб. 1913 г.

պարսկական կառավարութեան կողմը և պաշտպանել նրան էքս շահի ստնձգութիւններից, ինչպէ հետեղաբար բղխում է վերնիշեալ արձանագրութեան §. §. 10 և 11-ից, որի բոլորովին հակառակը, ներբառովը, պնդում է չեզոքութիւն պահպանելու տեսակէտի վրայ, Պարսկաստանի, իբր թէ ներքին ընօլթ կրող այս իրազարձութիւններում, Նա խօսում է մինչև իսկ Ռուսաստանի հասարակական կարծիքի մասին, մի բան, որ ցարական կառավարութիւնն երբէք և ոչ մի խնդրում հաշւի չէ առել իր զութեան ամբողջ ընթացքում:

Ռուս կառավարութիւնն այնուհետեւ սկսում է վարել իր անջատ քաղաքականութիւնը ներկալ խընդիրներում: Թէ հրանի նրա գեսպան Պակիսկի Կազել մի շրջաբերական հեռագրով հրահանգում է Պարսկաստանի իր հիւպատասներին հիւպատասներին, որ խիստ «չէզոքութիւն» պահ-

պանեն պարսկական կառավարութեան և Մահմեդ Ալու միջէ լինելիք ընդհարումներում, ինուու պահեն պարսկական իշխանութիւնը խիստ միջոցների գործադրումից, արգիլեն ուսուհապատակների միջամտութիւնն ու մասնակցութիւնը և անսառողներին՝ կօնսուլական կանոնադրութեան § 177.ի տրամադրութեան համաձայն ձերբակալեն և ուղարկեն Ռուսաստան։ Այլև հեռագրական կազմադրութիւն է ուղարկում, որ բատացնեն Կովկասեան և ձերձկաստեան սահմանագլուխներն, արգիլեռ համար ուսուհապատակ լեզափոխականների անցքը։ Այնուհետև, պարսկական կառավարութեան լիշեալ նոտալին պատասխանելուվ, լայտնում է, որ ինքը բոլոր միջոցները ձեռք է առել արգիլեռ էքս շահի հակառավարական ազիտացիան, որ շահի երեան գալը հետեւանք է պարսկական կառավարութեան աւ-

պիկարութեան, կուսակցական պարքարների, Մէջլիսի անգործութեան և ալլն, և այս բոլորի հիմամբ պարսկական կառավարութիւնը չի կարող զերծ համարել իրեն պատասխանատութիւնից, եթէ կատարուազերի ժամանակ ուսական կառավարութեան շահերին կամ նրա հպատակներին որևէ վընաս հասնի։

Պարկական կառավարութիւնը միւս կողմից ներքին ֆրոնտն ամրացնելու համար մի շարք միջոցների է ձեռնարկում։ Վարչապետ Սփահդարը մի շարք պահանջներ տրած լինելով Մէջլիսին և մերժումն ստանալով, հաւանաբար իրերեւ ուսունական է տալիս և նոր վարչապետ է ընտրում Բախտիար ցեղապետ Սամսանածուս Սալթանէն։ Հեռագրուում է Եւրոպա, որ Սարդար Ասագն անմիջապէս Թէհրան վերադասնալու Ամսի 6.ին Մէջլիսն ու Բախտիար-

ներն երկարաժեւ խորհրդակցութիւն են կատարում Մահմեդ Ալիին դիմագրելու միջոցների մասին, կատարում է սահմանադրական ոյժերի մոբլիզացիա և ամսի 8-ին Թէհրանում հրատարակում է զինւորական դրութիւն։

III

//

Նախ քան էքս շահի դեսանտը Գումիշթէփէում, նրա գործակալները մեծ քործ էին կատարել այնտեղ, և մեծ յաջողութիւններ ունեցել մանաւանդ ալդ շրջանի թուրքմէնների մէջ, ալնպէս որ շահն՝ ինքն ափ է դուրս գալիս շատ փոքրաթիւ արտալով՝ Շուահէս սալթանէն, Մոնթազիմ-օլ-Խոլք, Արշադ-դովլէ և մի քանի նրանակին մինիստրները և Յ ծառալու իր ձեռնարկի հէնց սկզբունք, նա

մեծ աջակցութիւն է գտնում առականավարութեան տեղական ներկայացուցիչներից, լանձին Աստրաբադի հինգատոս կոլեժուկի առաջարկ Խվանովի, որին շահն անվերտավահօրէն վուահում է, հազորգելով նրան իր ծրագիրների, զինւորական մարշրուտի, ուազմական ոլժերի և մինչև իսկ իր նիւթական միջոցների մասին, Ենորհիւահա ալս հանգամանքի, Խվանովի, Թէհրանի իր գեսալան Կազելին ուղղած հեռագրական և գրաւոր գաղտնի հազորդագրութիւններից մենք տեղեկանում ենք, որ Դիմիշթէփէում Շահի շուրջն են հաւաքւում անմիջապէս, առաջին հերթին մօտ 1000 թուրքմէն, իսկ շուրջով սպառուամ են՝ 3000 ուրիշ թուրքմէններ, 1000 քոլհանցիք, 1000 Բուջնուրդի քրգեր, 300 առարաբադցի, Ֆինդերցի, Կիդուլցի և նարգինցի ձիւուրներ, Շահութից 200, Մազանդարանից 1000, Բա-

շիդ Սալթանէի 300 մարդիկ և
Մազանդարանի (Յաւատքուհի, Լա-
րիջանի և Ֆիրուզքուհի) 3 ստա-
ւոր պոլկերը, 1000-ական հաշված,
ընդամենն ուրեմն մօտ 12,000
դին որական ուժ։

Սակայն մարդիկ հաւաքելլը
միայն բաւական չէր, հարկաւոր
էր նաև նրանց ապրուստը հոգալ
և ռազմական գործողութիւնների
համար միջոցները հալթովիճերը։
Սակայն պարզւում է, որ շահի
նիւթական պատրաստի միջոցները
չատ չնշին են, մինչդեռ կառա-
վարական բանակը, շնորհիւ գան-
ձապետ Շուսթերի, նիւթապէս ա-
պահոված է։ Եահը փող չունի,
ուզեցել է իրը թէ իր թանգար-
ժէք իրերը ռռւսական բանկում
գրաւ գնել, սակայն ինչ-ինչ պատ-
ճառներով չի լաջող ել։ Աստրա-
բադի բնակչութիւնից, ուր նա-
մանում է յուլիս 9 ին, հաւաքում
է 15,000 թուման՝ փոխառութեան

տնունով, 11,000 հակ բրնձից
տուրք է վերցնում, հաւաքում է
ալդ շրջանի խայիսէ (արքունի)
կալւածներից մալիտթը, մօտ 30000
թուման, ապա Ռազիդ Սալթանէ-
ին ուզարկում է խորասան, ուր
սա փող է հաւաքում և շահի ա-
նունով ստացականներ է տալիս
Սլլե, Սատրաբատում նա գրաւել
էր 6 թնդանօթ, որից երկուսը դաշ-
տալին և չորսը՝ լեռնալին և 100
000 փամփուշու։

Միսիթաբական չէ և նրա խոս-
նիճազանճ բանակի բարութական վի-
ճակը։ Եռմաւրդցիները, ճիշտ է,
նրա ամենազատահելի և կտրիճ
կռւողներն են, սակայն զբաղւում
են թալանով և զինուրական պար-
տականութիւններին քիչ են ուշք
գործնում, որդ տարբերի մէջ զո-
յութիւն ունի նաև ցեղալին ան-
տագոնիզմ՝ «շէրէֆներն», «շունի-
ները», որոնց զեկուվարելը շատ դըժ-
ւոր է և շահն ստիպւած է նրանց

վրու ազդել նրանց հոգի որ պետերի միջոցաւ։ Շահի գլխաւոր յոյսը մնում էն ուրեմն մազանդարան։ ցիներն՝ Խոմալիլ խանի, Թաշիդ-Սալթանի զօրքը։ Ահա այս կիսի ռազմական, նիւթական և բարսրական կազմովն է; որ շահն սկսում է իր պատերազմական զործողութիւնները։

Նրա բանակի աջ թեր շարժում է Թաշտի ու զզութեամբ, գըրաւելու այն և կապ պահպանելու շահսեանների և Պաղպինի վաշ։ Կատանների հետ, իսկ ձախս թեր, Դեմավենդի վրայով առաջ է շարժ։ Առաջ գեպի Թէհրան։ Ըստջին յաջող ընդհարումն ունենում է Սարդար-Արշազը՝ Դամդանի կիրճում, Զէլգամ-ուց սալթանէի բախտիարների հետ, յուլիս 26-ին։ Այս յաղթանակից լետու զօրքի ոզին զգալապէս բարձրուում է, գըրաւում է Սիմնան, Դամդան և Շահրութ։

Սակայն այդ հրճւանքը կարճա-

տե է լինում։ Հենց յաջորդ օրն, ամսի 27-ին Ֆիրուզքուչի մօտ կառավարական զօրքերի աւանդարդի հետ, թւով 1500 և Մօհնի Հիւմայունի և Սարգար Մօհիի զեկուվարութեամբ, կռւի բռնւած Թաշիդ-սուլթանը, նեզն լնկած, Մահմեդ Ալուց օգնութիւն է խնդրում, որը սակայն չստացած, պարտում է, գերի բռնւաւմ, իսկ բանակը կարցնում մօտ 100 մարդ։ Սակայն Մահմեդ Ալու գլխաւոր ոլժեըլը դեռ կանգուն են։

Հ. Յ. Դաշնակցութիւնն իր մարտական լուագուն ոյժերն ասպարէզ է բերել Պարոկաստանի սահմանադրութեան և ազատ կարգերին վտանգ սպառնացող այս որպատճաններութեան հանդէպ։ Անման Քեռին ու Խէչօն, նաև Խըմբապետ Գրիգորն և ընկերները մասնակցում են Ֆիրուզքուչի և միւս կռիւներին։ Շահստանի մեր Կենտրոն, Կամբաէն մալրաքաղաքի

պաշտպանութեանն է աջակցում,
իսկ վետերան Եփրեմը, գեռ հան-
գիստ, մալրաքաղաքումն է և բե-
ակցիսներ շարժմանը վերջին և
զնուական հարւած հասցնելու իր
հմուտ և անվրիպելի ծրագիրն է
կազմում, ամբողջ գեմոկրտու պարս-
կաստանի աչքը նրա վրայ է. իսկ
նա դանդաղ է շարժում և հմուտ
զօրապետի նման գիտէ իր գործն
և նրա սկսելու ժամանակը. Նա
գիտէ թշնամու ոյժն ու արժեքն
և սպասում, որ նա շատ մօտենալ
մալրաքաղաքին, հեռանայ Կաս-
պիականի տփերից, իր բազալից,
ուստական հաւանական պաշտպա-
նութիւնից և առնւազն՝ ապաս-
տանի հետաւորութիւնից:

Օգոստոսի կէսերին Եսհի գլխա-
ւոր բանակն արգէն Թէհրանին
մօտիկ է՝ Վարամինում, հազիւ 60
վերսի վրայ, գէպի արևելքը Եփ-
րեմը Մէջլիսին լուտարում է,
որ ամսի 23-ին գուրս է գալու

Թէհրանից և լաջարդ օրը վերադառ-
նալու է, անշուշտ լազիթական։
Veni, vidi, vici! Եւ իրօք, օգոստ.
23-ին նա գուրս է գալիս մալրա-
քաղաքից իր 300 ընտիր հայ տը-
ղաներով, 3 գնդացիր և 3 թնդա-
նօթներով. Ամիր Բահադրուրի հետ՝
որա 500 բախտիարներով։ Նրանց
հետեւմ են «Times»-ի և «Reuter»-ի թղթակիցները Եւ իրօք.
օգոստ 24-ին նա հեռագրում է
Թէհրան, որ Արշադ Դավլէին գերել
և հրացանազարկ է արել, 100 հո-
գի նրա զօրքից սպանել, գերել
բազմաթիւ թուրքմէններ և բա-
նուկը զլինովին ջարդ ու փշուր առ-
բել. Գլխովին ջարդւած շահն օգ.
31-ին զլինիկոր փախչում է գէպի
Գիւմիշիկէ և ապաստան գըտ.
նուժ ամին սպասող ուստական
հիւրընկալ նաւում։

IV

Վերեւումն ասացինք, որ Մահմադ Ալու ձեռնարկի համար կալին և ներքին նպատաւոր պայմանները եւ իրօք, երկրի ամեն կողմերում բոլոր ֆեոդալներն ու կալածատէր խաներն, ամեն տեսակի բէտկօխոն տարրերը, վաճառականութեան խոշոր մասը քաղաքներում հրճում էին Մահմեդ Ալու գոլով և մեծամեծ լոյսեր էին կազմում նրա արշաւանքի հետ: Թէ հրանի անզլիական գեսապան Բերկլեյն իր հին պատոսներից զեկուցումներ ունէր ստացած, ըստ որի, ազգաբնակութեան մեծամասնութեան համակրութիւնն էքսշահի կողմն է: Մաշտի սուս հիւպատոս Նեկրասովը նոյնն է հազարդում Գիլանի շրջանի վերաբերմամբ, աւելացնելով, որ միմիայն Բերիմ խանն է, որ իր զինւածոլժերով սահմանադրական կառա-

վարութեան պաշտպանութեան համար կանգնած է: Նու թեղանօթներ ունի և 500 նոր հրացաններով զինւած է: Առկայն, Մահմեդ Ալու զործի ամենակարևոր աջակիցները հանդիսանում են երկու ստորապներ՝ Առջառուգ գովլէն (Սամաթ խոն) Առրավատականում և արքունակն Առլար-էդ գովլէն՝ Համադանի և Քիրմանշահի շրջաններում, թէև նրանց զործողութիւնների մէջ սերտ կապ և ներգաշնակութիւն չի եղել:

Հին գովլ է Առջառուգ գովլէն, էքսշահի ալդ գործակիցներից մէկը, երկար տարիներ նահանգավետ է եղել Մարազալում, ուր նա ընդգարձակ կալածներ ու գիւղեր ունի: Պառկական լեզափախականսահմանդրական շարժման սկզբի շրջանում նա տիսուր զեր է կատարել, երկար ամիսներ շրջապատած պահելով և կաւելով լեզափախական թաւրիզի դէմ: Գիւմիշթէփէ

Հասնելուն պէս, շահը, օգոստ. 4. ին
սրան նշանակում է Ասրպատակաւ-
նի ընդհանուր նահանգապետ, որ
պիտի վոխտարիէք թէհրանի կա-
ռավարութեան կողմից նշանակ-
ւած Ամանուլլահ Միրզալին։ Եւ
Սուջա ու գովալլէն իր 3000 մարդ-
կանցով գուրս է գալիս Մարտզա-
յից, բանակ գնում Վասմինչ՝ թըր-
քաթնակ մեծ գի. զ, թէհրան տա-
նող ճանապարհին, թաւրիզից 20
վերսա հեռաւորութեան վրայ և
իր կողմից գուտապեաներ է նը-
շանակում Արգաթիլում, Մարտան-
գում և Ասրագաղում, հետզհետէ
գրաւելով ալլ վայրերն օգոստոս
ամաւայ ընթացքում։ Թաւրիզն ա-
մեն կողմից շրջապատում է, և
պահանջաւմ իրեն լոնձնել Թաւրի-
զի Անջումանի ծալրահեղ անդամ-
ներին։

Սուջա էդ գովլէին բացարձակ կեր-
պով աջակցում է Թաւրիզի ժաման-
նակի ոռու հիւպատոս տիրահըռ-

չակ Միլերը։ Նրա հեռագրական
հաղորդագրութիւնները թէհրանի
իր գեսպանին, ամենաթունաւոր
տեելութիւնն և լաճախ զզ. ելի
ինսինուացիաներն են պարանա-
կում Թաւրիզի լեզափոխականների
և առանձնապէս Հ. Յ. Դաշնակ-
ցութեան մասին։ Նո լալանում է,
ոչ Դաշնակցութեան Թաւրիզի օր-
գան «Ասաւոտ»-ն եռանգոււն ա-
գիտացիա է մզում Մահմեդ Ալու-
գէմ, որ գաշնակցականներն ու
թուրք Փիդալիները զինւած են
Ուռաստանից գնւած 2000 մասին,
ներով և մէկ միլիոն ֆամփուշ-
տով, որ նրանք պատրաստուած են
լարձակւել ուստական կազակների
Թաւրիզի օտրիազի վրայ և նրան
զինաթափ տնել, կորգագրութիւն
է ու զում գեսպանից բռնի ոլժով
խլել լեզափոխականների ձեռքից
ալլ հրացաններն և երբ մերժումն
է ստանում, խորհուրդ է տալիս
Կազելին, զոնէ պահանջել պարս-

կական կառավարութիւնից, որ գէն-
քերը լանձնւեն պարսկական կո-
ղակների բրիգադարին, որին միայն
նա փոտահանում է:

Այս բոլորի մէջ ճշգրիտն այն
է, որ Թաղանակութեան Առաջա-
տականի Կենտրոնական Կոմիտէն,
Մահմեդ Ալու Պարսկաստան ու աք
կոխիլու օրից, իր բոլոր ոլժերը
հաւաքած, ամենամեծ աջակցու-
թիւնն է ցոյց տւել պարսկի պատ-
ական տարրերին, ըէակսիոն շարժ-
ման դէմ մզւած պալքարում: Թաղ-
նակցական հարիւրեակը, հանգուց-
եալ հերոս Նիկոլի (Խումանի) հը-
րամանատարութեամբ, որի ոյժերն
օրէցօր մեծանում էին Սալմաստի և
Աւրմիալի մեր մարմինների կողմից,
ամենախոշը և վճռական դերն է
կատարել Վասմինջի, Կարամալիքի
և Մարալանի ճակատների կորւ-
ներում, ամեն անգամ լետ մզելով
Սուջա-էդ-դովլէի լորձակումներն,
ալնպէս, որ ագատական թաւրիզը

մինչև վերջն էլ մնաց անընկճելի:
Ցուլիսի սկզբներին, որպէս օ-
ժանդակ Մահմեդ Ալու ձեռնարկի,
երեսն է գալիս պրինց Սալմա-
էդ-դովլէն: Արտասահմանից, Տաճ-
կաստանի վրայով, Բաղդադի զծով
Պարսկաստան մտնելով, Համարեա
միայնակի, նու շուտով իր շուրջն է
հաւաքում աւելի քան 10,000
մարդ՝ Քիրդիստանի և Քիրման-
շահի շրջանում և կարճ ժամա-
նակում, լուլիս 17-ին զրաւում է
Քիրմանշահ, նահանգապետ նշա-
նակելով Ամնու-Մուլքին: Ալտեղ
նրան միանում են Քալհօրի Սար-
դար Մուջափիրը՝ 2000 մարդով,
Ալի-Ռզա խան 1500 մարդով, ու-
նեն 6 թնդանօթ: Նա այստեղից
հաւաքում է 15,000 թուման փող
և իւրացնում է մաքսատան եկա-
մուտները:

Օգոստ, 2-ին զրաւելով Համա-
գան, նա մի զեկլարասփոնով լայ-
տարարում է, որ եկել է 1) Հաս-

տատելու երկրում կարգ ու կանոնը, 2) վերահաստատելու սահմանադրութիւնը՝ (իր հասկացած ձեւով անշուշտ) և 3) վերահաստատելու Մահմեդ Ալի շահին իր գահի վրաբ: Նա այս մտքով մի հեռագիր էլ Թէհրան՝ Մէջլիսին է ուղղում: Սակայն բոլոր նշանները ցոյց էին տալիս, որ նա Կաջարների գահին տիրելու թագուն յաւակնութիւններն ուներ: Օգ. 28 ին Քովլաթաբագի մօտ, // կառավարուկան ոլժերի՝ բախտիար Էմիր Մաւֆախիսամի գէմ տարած նրա լազմանակը նրա լոյսերը մի պահ վառում են, Նա ալժմ սպառնում է Թէհրանին, որին նա շատ է յօտիկ, հազիւ 150 վերսու:

Մայրաքաղաքը նորից իրարանցման մէջ է՝ սատրապի մօտիկութեան պատճառաւ, ալդ նշանակում է, որ Եփրեմի՝ գործի անցնելու ժամանակն է: Եւ իրօք, նա իր անբաժան զինակից՝ բախտիար

Աարդար Բահագուրի հետ միասին դուրս է գալիս Թէհրանից սեպտ. 12 ին և լաջորդ օրը համում է ուղղմածակատը: Պատերազմական գործողութիւններին հետեղ «Tomes»-ի թղթակիցը սեպտ. 15-ին հեռագրում է — Նորմանի մօտ Սալար-դովլէն ջարդեց. 400 բապանւած, 200 զերի, գրաւած է 6 թնգանօթ: Նա քաշւում է Համադանս: Սաւէի մօտ, թշնամու բանակի աջ թեկի վրայ, ալդ առաջին լաղթանակից մի քանի օր լետու ճակատամարտը կրկնում է: Սարար գովլէն երկրորդ անգամ և վճռապէս ջախջախուում և սեպտ. 22-ին թողնում է Համադանն և Գուռու խանի, Նազար-Ալի խանի և իր ըանակի բեկորների՝ 4000 լորերի և քրգերի հետ նահանջում է Բիրուջիրդ և ալնտեղից Քիրմանշահ, ուր նրա մարդկանցից շատերը բեստ են նստում անգիտկան հիւպատոսարանը: Ալս հոյա-

կասկ լաղթանակների մասին Եփրե-
 մը հեռագրում է Թէհրան և Թաւ-
 րիզի ռԱռաւօտք-ին։ Հոկտ. 9.ին
 նու վերադառնում է Թէհրան, որից
 լիտու Սալար-դովլէի փոքրացած
 ոլժերի զէմ մզւոզ կոխները զե-
 կավարում է նրա օգնական՝ Քեռին։
 Մահմեդ Ալու ձեռնարկած ա-
 ւանտիւրալի լիկուիդատիոնը կատար-
 ւած էր։



